# ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 15-Ի ԹԻՎ ԹԻՎ 23-Ա,24-Ն ԵՎ 25-Ա-37-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Թիվ 23-Ա որոշման մեջ օրակարգի յուրաքանչյուր հարցից հետո անհրաժեշտ է նշել զեկուցող պաշտոնատար անձի անունը,ազգանունը:

Թիվ 24-Ն որոշման դրույթների համարակալումը սխալ է կատարված: Բացի այդ, որոշման 8-րդ կետը չի համապատասխանում որոշման վերնագրին:

Որոշման եկամտային և ծախսային մասերում կատարված փոփոխությունները թերի են, ինչպես նաև որոշմամբ կատարված գումարային փոփոխություններով խախտվել է բյուջեի հավասարակշռությունը: Համաձայն «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթի՝ համայնքի բյուջեում կատարվող փոփոխությունները և (կամ) լրացումները չեն կարող խախտել համայնքի բյուջեի հավասարակշռությունը:

Թիվ 25-Ա որոշման բովանդակության մեջ հղում է կատարվել հավելվածին, սակայն անբաժանելի մաս համարվող հավելվածը կից ներկայացված չէ:

Թիվ 26-Ա որոշման 1-ին կետը չի համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 8-րդ մասին,համաձայն որի՝ հղում կատարելիս նորմատիվ իրավական ակտի լրիվ անվանումը հիշատակվում է նորմատիվ իրավական ակտում փոփոխություններ կամ լրացումներ նախատեսող կամ նորմատիվ իրավական ակտի գործողությունը դադարեցնող ակտում:

Թիվ 27-Ա որոշման 1-ին կետը չի համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 6-րդ մասին, համաձայն որի՝ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի լրիվ անվանումը հիշատակելիս դրանում հետևյալ հաջորդականությամբ ներառվում են այդ ակտն ընդունող մարմնի անվանումը, ընդունման տարին, ամիսը (տառերով), ամսաթիվը, ակտի վերնագիրը, ակտի հերթական համարը,բնույթը և տեսակը:

Թիվ 28-Ա որոշմամբ հաստատված թիվ 1 և թիվ 2 հավելվածները կից ներկայացված չեն:

Թիվ թիվ 31-Ա և 32-Ա որոշումների 1-ին կետերը չեն համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 8-րդ մասին,համաձայն որի՝ հղում կատարելիս նորմատիվ իրավական ակտի լրիվ անվանումը հիշատակվում է նորմատիվ իրավական ակտում փոփոխություններ կամ լրացումներ նախատեսող կամ նորմատիվ իրավական ակտի գործողությունը դադարեցնող ակտում: Բացի այդ,թիվ

32-Ա որոշման 2-րդ կետը չի համապատասխանում որոշման վերնագրին:

Թիվ 35-Ա որոշման 1-ին կետը չի համապատասխանում «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներին: Այսինքն՝ որոշման մեջ նշված չէ հողի նպատակային և գործնառական նշանակությունը:

Թիվ 37-Ա որոշման նախաբանում «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի վերնագիրը թերի է գրառված:

Թիվ 26-Ա որոշման 4-րդ, թիվ 27-Ա որոշման 3-րդ , թիվ 28-Ա որոշման 6-րդ, թիվ 29-Ա որոշման 3-րդ, թիվ 30-Ա որոշման 4-րդ, թիվ 31-Ա որոշման 2-րդ, թիվ 32-Ա որոշման 3-րդ, թիվ 33-Ա որոշման 3-րդ, թիվ 34-Ա որոշման 3-րդ, թիվ 35-Ա որոշման 2-րդ և թիվ 36-Ա որոշման 4-րդ կետերը չեն համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջին, համաձայն որի՝ անհատական իրավական ակտն ուժի մեջ է մտնում այդ ակտի ընդունման մասին այն անձանց առձեռն կամ օրենքով սահմանված այլ կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից, որոնց ուղղված է ակտը:

*Կատարող՝ Նաիրա Մարտիրոսյան*
*12.05.2021թ.*